

10. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակահատվածում պետական վիճակագրության ոլորտում իրականացված՝ Եռամյա և տարեկան ծրագրերով նախանշված և այլ միջոցառումները ֆինանսավորվել են հետևյալ հիմնական աղբյուրներից՝

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե. Նախատեսվել է ընդամենը 1860.2 մլն դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 572.5 մլն դրամ, 2005թ.՝ 580.3 մլն դրամ և 2006թ.՝ 707.4 մլն դրամ, հատկացվել է ընդամենը՝ 1794.3 մլն դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 546.8 մլն դրամ, 2005թ.՝ 549.7 մլն դրամ և 2006թ.՝ 697.8 մլն դրամ, հատկացումը նախատեսվածի նկատմամբ կազմել է 96.5%, այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 95.5%, 2005թ.՝ 94.7% և 2006թ.՝ 98.7%:

Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհներ. Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի գերակշիռ մասի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է դոնոր կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից: Ծառայության կողմից ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է ընդամենը՝ 148527.5 հազ.դրամի, այդ թվում ըստ տարիների՝ 2004թ.՝ 101612.3 հազ. դրամի, 2005թ.՝ 5359.2 հազ. դրամի, 2006թ.՝ 41556 հազ. դրամի չափով: